

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Էջ

Հ. ՄԵՍՐՈՊ ԺԱՆԱՇԻԱՆ. - Վարդանանց Ղիզազ-
նամարտին 1500-ամեակը. 193

ՊԱՏՄԱԿԱՆ

Հ. ԵՍԱՅԻ ԳՈՌԻՋԵԱՆ. - 2 Յունիս 451-ի Հայ-
կական հերոսամարտը. անոր առաջնորդը և
օգնական զորավարները. 198

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ. - Դաւանութիւն Վարդանանց
(Հատուած մը Եղիշէի պատմութենէն) 224

Հ. ՅԱԿՈԲ ԶԱՆԹԱՅԵԱՆ. - Վարդանանց պատե-
րազմի առթիւ խորհրդածութիւններ 226

Հ. ՂԵՒՈՆԴ ՏԱՅԵԱՆ. - Ս. Վարդանանց մասունք-
ները 233

Հ. ՊՅՈՒՍ ՀԱՄԷԼԵԱՆ. - Արտաշատի ժողովքը և
անոր մասնակցող եպիսկոպոսները 256

ԵՂԻՇԷ ՊԱՏՄԱԳԻՐ. - Աւարայրի ճակատամարտը
(Թրգմ. աշխարհարար Հ. Կերսէն Տէր Կեր-
սէսեան) 263

ԳՐԱԿԱՆ

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ. - Ս. Ղանդկ Երէց Վանան-
դացի (ճառ). Թրգմ. աշխարհարար Հ. Քե-
րովրէ վրդ. Զրաքեան 235

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ. - Մահուան ճանա-
պարհը 244

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ. - Դատաստան Վասակ մա-
նիչի (Թրգմ. աշխարհարար Հ. Վահան Յով-
հաննէսեան) 267

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ. - Աւարայրի դիւ-
ցազները (Թատերախաղ չորս արարով) 275

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ. - Զոյգ Յորեկեան-
ներ Ս. Վազարու մայրավանդին մէջ 286

ԹՂԹԱԿԻՅ. - Մարտիկոյ կայարանին մէջ 288

PAGE

ARTICLE DE FOND

P. Mesrop Djanachian. - Le 1500ième anni-
versaire de la Guerre sacrée des Var-
taniens 193

HISTOIRE

P. Isaïe Krouzian. - La guerre sacrée de
2 Juin 451; son chef et ses aides 198

Elisée l'historien. - La profession de foi des
Vartaniens (extrait de l'Histoire) 224

P. H. Tchantayan. - Reflexions sur la guerre
des Vartaniens 226

P. Léonce Dayan. - Les reliques des Saints
Vartaniens 233

P. P. Hamelian. - Le concile d'Achdichad
et les évêques qui l'ont participé 256

Elisée l'historien. - La guerre d'Avarayr
(Trad. en arménien moderne par le
Rév. P. Nersès Der Nersessian) 263

LITTÉRATURE

P. L. Alishan. - St. Léonce, prêtre de Va-
nante (Trad. en arménien moderne
par le Rév. P. Chérubin Tcherakian). 235

P. V. Hovhannessian. - La route de la
mort 244

P. L. Alishan. Le procès du traître Vasak.
poésie (Trad. en arménien moderne
par le Rév. P. V. Hovhannessian) 267

P. Sahak Der Movsessian. - Les héros d'Ava-
rayr (Drame, en 4 actes) 275

ECHO ARMÉNIEN

P. N. Der Nersessian. - Les doubles Jubilés
au Couvent de St. Lazare 286

Notre Correspondant. - A la gare de Mar-
seille 288

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1951
109-րդ ՏԱՐԻ



ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՆՈՎԵՄԲԵՐ
ԹԻՒ 9-10

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴԻԻՑԱԶՆԱՄԱՐՏԻՆ
1500-ԱՄԵԱԿԸ



Եւ ժամանակները օրէնքներ
են դառնորէ համար պատ-
մական դէպքերը իրենց չա-
փանիշին մէջ, երբ մարդկային ա-
րարքները իրենց արժանիքը կը ստա-
նան նպատակին բարձրութենէն և
արդիւնաբերութեամբ օգուտներէն, վար-
դանանց Դիւցազնամարտը այդքան
հեռուոր դարերու խորութենէն երբ
տակաւին կը շարունակէ ազդել և
ներշնչել, ինքնին փաստ մըն է թէ կան
ապրումներ ժողովուրդներու կեանքին
մէջ որ չեն ոչնչանար ժամանակներու
հոլովոյթին հետ, ոչ կը պահեն միշտ
իրենց բարձրութիւնը և ոգեւորիչ ոյժը:
1500 տարիները չեն յաջողած ար-
դարեւ ջնջել հայ մտքէն և հայ սրտէն
այդ բացառիկ եղելութեան վսեմ գեղեց-
կութիւնը: Իսկ նպատակը, խորապէս

նշխրական և խորապէս գերազանց,
որ մարդկայինէն վեր կը բարձրանայ,
այդ եզակեանքէն անկման դէպքին
տուած է և՛ արքունիքի և՛ անջնջելի
հեմայք մը հոգեգրութիւն:
Այս պարագան կը բացատրէ այն
մեծ խանդավառութիւնը որ ոտքի հա-
նեց բովանդակ հայ ազգը, տօնախմբե-
լու փառապան ճազարհիւզհարիշա-
մեակը: Մեր ազգային հպարտութիւնը
փայտայտ այս պատմական դէպքը,
երկու խոշոր նշանակութիւն ունի,
լուծելով երկու կեանական հարցեր,
մին ազգային, միւր միջազգային
գեղմի վրայ:
Իրանի կայսրութիւնը ծրագրած էր
բնաջինջ ընել Հայաստանը որպէս
անկախ պետութիւն, և առով տեր ըլ-
լալ բովանդակ մերձաւոր Արեւելքի

երկիրներուն։ Արշակունի հարստոշ-
քեան անկոշակն վերջ մանաւանդ քայ-
քայուն էր մեր ազգային միոշիւնը.
նախարարներու հեռն ու անմիաբա-
նոշիւնը, քաղաքական անխոհեմնո-
շիւնները պատրաստում էին դժբախտ
կացոշիւն մը, որմէ բնականաբար
սխալի ուղիք ոգտուի Տիգրանի ար-
քունիքը։ Իրանի վեհապետը Յագ-
կերտ Բ., դիւանագետ ու իմաստուն,
և չերմայեա կրօնական մարդ, ըստ
մագդեղական կրօնքի՝ գերագոյն Կրօ-
նապետը միանգամայն իր Դեմիւն,
համիրանական քաղաքականութեան
հետեւող մ'էր, ջանալով ձուլել դրա-
ցի բոլոր ժողովուրդները։ Զրադաշտի
կրօնքին մէջ, և աշայեա ստեղծել հսկայ
հողամասերուն վրայ, որոնց տէրն էր,
միազանգ ժողովուրդ մը։ Հարստակ
ազգերուն մէջ քրիստոնէայ Հայաս-
տանը կը ներկայացներ կարեւորագոյն
ոյժը մերձաւոր արեւելքի մէջ, և որուն
անկոշակն սխալի դիւրացներ անտարա-
կոյս իր աշխարհակաշութեան ճրա-
գիրները նսեւ Բիզանդիոնի դէմ։


Իրանի վեհապետին ճրագիրը կը
փոխանակէր հետեւաբար մեր ազգային
անկախութիւնը իբրեւ պետութիւն, և
քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ։
Երկու ահաւոր քայքայում մէկ հա-
րունձով։ Ահա թէ ինչո՞ւ բովանդակ
հայ ազգը ոտքի կը կանգնի իր ժո-
ղովուրդով և իր կղերով։ Տղմուտի
ափերուն վրայ մղուած ձախտաւար-
տը յետին և վճռական փորձն էր
դիւնադրութեան, անկորոշուտ պահերու
համար կրօնական և ազգային աշակ-
ղութիւնները ոտխի մը դէմ։

Քառասպառնիկ աշէլի զօրութեամբ աւ-
րացած՝ կու գար աշերել մեր հայրենի
տաճարները, պղծել մեր սրբութիւն-
ները և քարոշքանդ ընել քաղաքա-
կրթութեան աշխարհ մը։ Զմայրելի է
պարզապէս այն ոգին որ կը կաշա-
վարէ հայկական դիւնադրութեան բա-
նակը, դիւցազունները և կղերը, գի-
տակից՝ թէ պայքարը զոր կը մղեն՝
Աստուծոյ համար է, իրենց եկեղեցի-
ներուն պաշտպանութեան համար է,
իրենց լոյս հաշտութիւն անաղարտ
պահպանութիւն համար է։ Ո՞ր ժողո-
վուրդի պատմութեան մէջ, ըսէք, նման
դէպք մը արձանագրուած է, դէպք մը
որ ըլլայ հոգիի և մտքի պայքարին
խտացումը, որ ըլլայ Կրօնքի և Հայրե-
նիքի գաղափարականներուն յաղթա-
նակը, որ ըլլայ մանաւանդ իսկական
նահատակութիւն մը ազգովին, դիւ-
ցազնային իր աւեկն կողմերով։ Վար-
դան ու Ղեւոնդ պատմական դէպքեր
չեն պարզապէս, անոնք անձնաշո-
րուններ են ազգի մը անխախտ փա-
րունին Աշտարանի լոյսին ու դաշա-
նութեան, եկեղեցոյ փրկութեան և
խղձերու անբռնաբարելի ազատու-
թեան։

Վարդանանց դիւցազնաւարտին
երկրորդ պատմական նշանակութիւնը
միջազգային է։ Հայաստան փրկեց
Բիզանդիոնը և Երրոպան։ Հայ դիւ-
ցազուններու օրինակէն Տիգրան հաս-
կըցաւ որ քրիստոնէութիւնը խոր ար-
մատներ ձգած էր գայն դաշակող
ժողովուրդներուն մէջ։ Իր ուժեղ յար-
ձակումը խորտակուեցաւ, և համիրա-
նական ճրագիրը Յագկերտին հետ



ԱՆՄԱՆՆ ԸԶԲԵԶ ԿԵՐՏԵՅ ՎԸՍԵՄՆ ԱՐԱՐԱՏ,
ԱՆՄԱՆՆ ԵՐԿԵՐ ԸԶԲԵԶ ԳԸՐԵՅ ՍՐՏԱԿԱԹ.
ՀԱՅ ՍՐՏԵՐՈՒ ՄԷՁ ՊԻՏ՝ ԱՊՐԻՍ ԴԱՐԷ ԴԱՐ,
ԳՈՒ ՅԻՇԱՍԱԿԻ ԱՆՈՆՅ ԿԸՏԱԿ ԱՆՎԸԹԱՐ:



165571

